

Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների

ավանդադրման միջազգային ճանաչման մասին

Բուդապեշտի պայմանագիր

Կնքված Բուդապեշտում 1977թ. ապրիլի 28-ին
և փոփոխված 1980թ. սեպտեմբերի 26-ին

ՑԱՆԿ*

Ներածական դրույթներ

Հոդված 1. Միության ստեղծումը

Հոդված 2. Սահմանումներ

Գլուխ I. Նյութական իրավունքի դրույթներ

Հոդված 3. Միկրոօրգանիզմների ավանդադրման ճանաչումը և հետևանքները

Հոդված 4. Կրկնական ավանդադրում

Հոդված 5. Արտահանման և ներմուծման սահմանափակումներ

Հոդված 6. Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը

Հոդված 7. Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի ձեռքբերումը

Հոդված 8. Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի դադարեցումը և սահմանափակումը

Հոդված 9. Արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություններ

Գլուխ II. Վարչական դրույթներ

Հոդված 10. Ասամբլեան

Հոդված 11. Միջազգային բյուրոն

Հոդված 12. Հրահանգ

Գլուխ III. Վերանայում և փոփոխություններ

Հոդված 13. Պայմանագրի վերանայումը

Հոդված 14. Պայմանագրի որոշ դրույթների փոփոխություն

Գլուխ IV. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 15. Պայմանագրին մասնակից կողմ դառնալը

Հոդված 16. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Հոդված 17. Պայմանագիրը չեղյալ հայտարարելը

Հոդված 18. Պայմանագրի ստորագրումը և լեզուները

Հոդված 19. Պայմանագիրն ի պահ հանձնելը, պատճենների առաքումը, պայմանագրի գրանցումը

Հոդված 20. Ծանուցումներ

*Այս ցանկն ավելացված է մատչելիություն ապահովելու համար: Պայմանագրի բնօրինակում (անգլերեն) այն չկա:

Ներածական դրույթներ

Հոդված 1 Միության ստեղծումը

Սույն Պայմանագրի մասնակից պետությունները (այսուհետ՝ մասնակից պետություններ) արտոնագրային գործընթացի նպատակով ստեղծում են միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման միություն:

Հոդված 2 Մահմանումներ

Սույն Պայմանագրի և հրահանգի նպատակով՝

(i) «արտոնագրին» արված հղումները մեկնաբանվում են որպես հղումներ գյուտերի արտոնագրմանը, գյուտերի հեղինակային վկայագրերին, օգտակարության վկայագրերին, օգտակար մոդելներին, լրացուցիչ արտոնագրերին կամ լրացուցիչ հեղինակային վկայագրերին, լրացուցիչ օգտակարության վկայագրերին:

(ii) «միկրոօրգանիզմի ավանդադրում» նշանակում է (ըստ այն ենթատեքստի, որում այս բառերն օգտագործվում են) սույն Պայմանագրի և Հրահանգի համաձայն իրականացվող գործողությունները, միկրոօրգանիզմի փոխանցումը որևէ միջազգային ավանդադրման մարմնի, որը ստանում և ընդունում է այն, կամ այդպիսի միկրոօրգանիզմի պահպանումը միջազգային ավանդադրման մարմնի կողմից, կամ վերը նշված փոխանցումը և վերը նշված պահպանումը միասին:

(iii) «արտոնագրային գործընթաց» նշանակում է ցանկացած վարչական կամ իրավաբանական գործընթաց, որը վերաբերում է արտոնագրի համար ներկայացվող դիմումին կամ արտոնագրին:

(iv) «արտոնագրային գործընթացի նպատակով արված հրապարակում» նշանակում է պաշտոնական հրապարակմամբ արտոնագրային հայտը կամ արտոնագիրը համընդհանուր ծանոթացման դնելը:

(v) «արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն» նշանակում է մի կազմակերպություն, որը հայտարարագիր է ներկայացրել 9(1) հոդվածի համաձայն:

(vi) «արդյունաբերական սեփականության գերատեսչություն» նշանակում է մասնակից պետության լիազոր մարմին կամ արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն, որը իրավասու է տալ արտոնագրեր:

(vii) «ավանդադրման հաստատություն» նշանակում է հաստատություն, որը ապահովում է միկրոօրգանիզմների ստացումը, ընդունումն ու պահպանումը և դրանց նմուշների տրամադրումը:

(viii) «ավանդադրման միջազգային մարմին» նշանակում է ավանդադրման մարմին, որը 7-րդ հոդվածի համաձայն ձեռք է բերել միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ:

(ix) «ավանդատու» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ որևէ իրավահաջորդ, որը փոխանցում է միկրոօրգանիզմը միջազգային ավանդադրման մարմնին, որը ստանում և ընդունում է այն:

(x) «Միություն» նշանակում է 1-ին հոդվածում նշված Միությունը:

(xi) «Ասամբլեա» նշանակում է 10-րդ հոդվածում նշված Ասամբլեան:

(xii) «Կազմակերպություն» նշանակում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը:

(xiii) «Միջազգային բյուրո» նշանակում է Կազմակերպության միջազգային բյուրոն և Մտավոր սեփականության պաշտպանության միավորված միջազգային բյուրոները (BIRPI), քանի դեռ դրանք գոյություն ունեն:

(xiv) «Գլխավոր տնօրեն» նշանակում է Կազմակերպության գլխավոր տնօրենը:

(xv) «Հրահանգ» նշանակում է 12-րդ հոդվածում նշված Հրահանգը:

ԳԼՈՒԽ I

Նյութական իրավունքի դրույթներ

Հոդված 3

Միկրոօրգանիզմների ավանդադրման ճանաչումը և հետևանքները

(1) (ա) Մասնակից պետությունները, որոնք արտոնագրային գործընթացի նպատակով թույլատրում կամ պահանջում են միկրոօրգանիզմների ավանդադրում, այդ նպատակով ճանաչում են միկրոօրգանիզմի ավանդադրումը որևէ միջազգային ավանդադրման մարմնում: Այդ ճանաչումը ներառում է միջազգային ավանդադրման մարմնի կողմից նշված ավանդադրման փաստը և օրը, ինչպես նաև այն փաստը, որ այն, ինչը ներկայացվում է որպես նմուշ, ավանդադրված միկրոօրգանիզմի նմուշն է:

(բ) Ցանկացած մասնակից պետություն կարող է պահանջել (ա) կետում նշված ավանդադրման ստացման փաստաթղթի օրինակ, որը տրված է միջազգային ավանդադրման մարմնի կողմից:

(2) Սույն Պայմանագրով և Հրահանգով կանոնակարգվող խնդիրների առումով ոչ մի մասնակից պետություն չի կարող պահանջել այնպիսի պահանջների համապատասխանություն, որոնք տարբերվում են կամ ավելին են, քան սույն Պայմանագրով և Հրահանգով սահմանված պահանջները:

Հոդված 4

Կրկնական ավանդադրում

(1) (ա) Եթե միջազգային ավանդադրման մարմինը որևէ պատճառով չի կարող ավանդադրված միկրոօրգանիզմի նմուշ տալ, մասնավորապես՝

(i) եթե այդ միկրոօրգանիզմը այլևս կենսունակ չէ, կամ

(ii) եթե նմուշ տալու համար պահանջվում է դրանց առաքումն այլ երկրներ, իսկ նմուշների առաքումը կամ ստացումն արգելված է արտահանման կամ ներմուծման սահմանափակումներով, այդ մարմինը պետք է նշումները տրամադրելու անհնարինության փաստը հայտնաբերելուն պես ավանդատուին ծանուցի այդ մասին, նշելով պատճառը, իսկ ավանդատուն, համաձայն (2)-րդ կետի, և ինչպես սահմանված է սույն կետով, իրավունք ունի նախապես ավանդադրված միկրոօրգանիզմը նորից ավանդադրելու:

(բ) Կրկնական ավանդադրումը արվում է այն միջազգային ավանդադրման մարմնում, որտեղ կատարվել է սկզբնական ավանդադրումը, սակայն՝

(i) այն կատարվում է մեկ այլ միջազգային ավանդադրման մարմնում, եթե այն մարմինը, որտեղ կատարվել է սկզբնական ավանդադրումը, կորցնում է միջազգային ավանդադրման մարմնի իր կարգավիճակը կամ անբողոջությամբ, կամ տվյալ տեսակի միկրոօրգանիզմի համար, կամ եթե այդ միջազգային ավանդադրման մարմինը ժամանակավորապես կամ ընդհանրապես դադարեցնում է իր գործառնությունները ավանդադրված միկրոօրգանիզմների նկատմամբ:

(ii) այն կարող է կատարվել մեկ այլ միջազգային ավանդադրման մարմնում՝ (ա)(ii) կետով նախատեսված դեպքում:

(գ) Ցանկացած կրկնական ավանդադրման կցվում է ավանդատուի կողմից ստորագրված հայտարարություն այն մասին, որ նորից ավանդադրված միկրոօրգանիզմը նույնն է, ինչ նախապես ավանդադրվածը:

(դ) Ելնելով (ա)-(գ) և (ե) կետերից, կրկնական ավանդադրումը թվագրվում է նախնական ավանդադրման օրով, եթե նախապես ավանդադրված միկրոօրգանիզմի կենսունակության մասին բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ միկրոօրգանիզմը կենսունակ է եղել, և եթե կրկնական ավանդադրումն արվել է (ա) կետով նախատեսված ծանուցումը ավանդատուի կողմից ստանալուց երեք ամիս անց:

(ե) Եթե գործում է (բ)(i) կետը, և (բ)(i) կետում նշված ավարտման, սահմանափակման կամ դադարեցման մասին Միջազգային բյուրոյի կողմից կատարված հրապարակման օրվանից վեց ամսվա ընթացքում ավանդատուն չի ստանում (ա) կետով սահմանված ծանուցումը, ապա (դ) կետում նշված եռամսյա ժամկետը հաշվարկվում է վերը նշված հրապարակման օրվանից:

(2) (1)(ա) կետում նշված իրավունքը չի գործում, եթե ավանդադրված միկրոօրգանիզմը տեղափոխվել է մեկ այլ միջազգային ավանդադրման մարմին, քանի դեռ այդ մարմինն ի վիճակի է տրամադրել այդպիսի միկրոօրգանիզմի նմուշներ:

Հոդված 5

Արտահանման և ներմուծման սահմանափակումները

Յուրաքանչյուր մասնակից պետություն ցանկալի է համարում, որ եթե այնուամենայնիվ միկրոօրգանիզմների որոշ տեսակների ներմուծման կամ արտահանման համար սահմանափակումներ կան, այդպիսի սահմանափակումները սույն պայմանագրով կտարածվեն ավանդադրված կամ ավանդադրման համար նախատեսված միկրոօրգանիզմների վրա միայն այն դեպքում, եթե այդ սահմանափակումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ առողջապահության և շրջակա միջավայրի անվտանգության նպատակով:

Հոդված 6

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը

(1) Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ ձեռք բերելու համար ցանկացած ավանդադրման հիմնարկ պետք է գտնվի մասնակից պետության տարածքում և օգտվի այն առավելություններից, որոնք առկա են սվյալ պետության կողմից տրված հավաստիացումներում այն մասին, որ այդ մարմինը համապատասխանում է և հետագայում կշարունակի համապատասխանել (2) կետում նշված պահանջներին: Վերը նշված հավաստիացումները կարող են ներկայացվել նաև արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպության կողմից. այդ դեպքում ավանդադրման հիմնարկը պետք է տեղաբաշխված լինի այդ կազմակերպության մասնակից պետությունում:

(2) Ավանդադրման հիմնարկը որպես միջազգային ավանդադրման մարմին պարտավոր է՝

(i) գոյություն ունենալ անընդհատ.

(ii) սույն պայմանագրին համապատասխան գիտական և վարչական առաջադրանքներն իրականացնելու համար ունենալ անհրաժեշտ աշխատակազմ և պայմաններ, ինչպես նշված է Հրահանգում.

(iii) լինել անկողմնակալ և օբյեկտիվ.

(iv) ավանդադրման համար նույն պայմաններով հասանելի լինել ցանկացած ավանդատուի.

(v) ավանդադրման համար ընդունել միկրոօրգանիզմների ցանկացած կամ որևէ կոնկրետ տեսակ, ստուգել դրանց կենսունակությունը և պահպանել դրանք, ինչպես նախատեսված է Հրահանգում.

(vi) կենսունակության մասին ավանդատուին տալ տեղեկանք և պահանջվող ցանկացած վկայագիր, ինչպես նախատեսված է Հրահանգում.

(vii) ավանդադրված միկրոօրգանիզմների հետ կապված ենթարկվել գաղտնիության պահանջներին, ինչպես նախատեսված է Հրահանգում.

(viii) տրամադրել ցանկացած ավանդադրված միկրոօրգանիզմի նմուշ՝ Հրահանգի պայմանների պահպանմամբ և ընթացակարգին համապատասխան:

(3) Հրահանգը նախատեսում է քայլեր, որոնք ձեռնարկվում են՝

(i) եթե որևէ միջազգային ավանդադրման մարմին ժամանակավոր կամ մշտապես դադարեցնում է իր գործունեությունը ավանդադրված միկրոօրգանիզմների նկատմամբ կամ հրաժարվում է ընդունել որևէ տեսակի միկրոօրգանիզմներ, որոնք նա պետք է ընդուներ տրված երաշխիքին համապատասխան.

(ii) որևէ միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը որպես միջազգային ավանդադրման մարմին դադարելու կամ սահմանափակվելու դեպքում:

Հոդված 7

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի ձեռքբերումը

(1)(ա) Ավանդադրման հիմնարկը միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ ձեռք է բերում մասնակից պետության կողմից, որի տարածքում տեղաբաշխված է ավանդադրման հիմնարկը, գլխավոր տնօրենին հասցեագրված գրավոր հաղորդման հիման վրա, որը երաշխիքներ է պարունակում այն մասին, որ նշված հիմնարկը համապատասխանում է և կշարունակի համապատասխանել 6(2) հոդվածով սահմանված պահանջներին: Նշված կարգավիճակը կարող է ձեռք բերվել նաև արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպության կողմից գլխավոր տնօրենին հասցեագրված գրավոր հաղորդման հիման վրա, որը պարունակում է վերոհիշյալ հայտարարագիրը:

(բ) Այդ հաղորդումը պարունակում է նաև ավանդադրման հիմնարկի մասին տեղեկատվություն, ինչպես նախատեսված է Հրահանգով, և որը կարող է ներառել այն թվականը, որից սկսած միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը ուժի մեջ կմտնի:

(2)(ա) Եթե գլխավոր տնօրենը համարում է, որ հաղորդումը պարունակում է պահանջվող հայտարարագիրը, և պահանջվող ամբողջ տեղեկատվությունը ստացվել է, ապա Միջազգային բյուրոն անմիջապես հրապարակում է այդ հաղորդումը:

(բ) Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը ձեռք է բերվում հաղորդման հրապարակման թվականից, կամ եթե (1)(բ) կետին համապատասխան նշված է ժամկետ, և այն ավելի ուշ է, քան հաղորդման հրապարակման թվականը, ընդունվում է այդ թվականը:

(3) (1) և (2) կետերին համապատասխան ընթացակարգերի մանրամասները նախատեսված են Հրահանգում:

Հոդված 8

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի դադարեցումը և սահմանափակումը

(1)(ա) Յուրաքանչյուր մասնակից պետություն կամ արդյունաբերական սեփականության յուրաքանչյուր միջկառավարական կազմակերպություն կարող է պահանջել Ասամբլեայից՝ դադարեցնել կամ սահմանափակել որևէ միջազգային ավանդադրման մարմնի գործունեությունը միկրոօրգանիզմների որոշակի տեսակների նկատմամբ՝ այն հիմնավորումով, որ մարմինը չի համապատասխանել կամ այլևս չի համապատասխանում 6-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Այնուամենայնիվ, այդպիսի պահանջ չի կարող ներկայացնել այն մասնակից պետությունը կամ արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունը, որը միջազգային ավանդադրման մարմնի համար ներկայացրել է 7(1) (ա) հոդվածով նախատեսված հաղորդումը:

(բ) Մինչև (ա) կետով սահմանված պահանջը ներկայացնելը՝ մասնակից պետությունը կամ արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունը պետք է իր պահանջի պատճառների մասին գլխավոր տնօրենի միջոցով ծանուցի մասնակից պետությանը կամ այն արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությանը, որն ուղարկել է 7(1) հոդվածում նշված հաղորդումը, այնպես, որ այդ պետությունը կամ կազմակերպությունը կարողանա վերը նշված ծանուցումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում ձեռնարկել քայլեր՝ առաջարկված պահանջի անհրաժեշտությունը վերացնելու համար:

(գ) Եթե Ասամբլեան պահանջը համարում է բավարար հիմնավորված, ապա որոշում է ընդունում միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը դադարեցնելու կամ միկրոօրգանիզմների որոշակի տեսակների նկատմամբ սահմանափակելու մասին, ինչպես նշված է (ա) կետում: Ասամբլեայի որոշումը պահանջում է ձայների երկու երրորդ մեծամասնություն՝ հոգուտ վերոհիշյալ որոշման:

(2)(ա) 7(1)(ա) հոդվածի համաձայն հայտարարագիր ներկայացրած մասնակից պետությունը կամ արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունը կարող է գլխավոր տնօրենին հասցեագրված հայտարարությամբ հետ կանչել իր հայտարարագիրը կամ

ամբողջությամբ, կամ միայն որոշ միկրոօրգանիզմների տեսակների նկատմամբ, և պետք է հետ կանչի իր հայտարարագիրը, երբ դրա հիմնավորումները այլևս վավերական չեն:

(բ) Այդպիսի հաղորդումները Հրահանգում նշված թվականից սկսած հանգեցնում են միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի դադարեցման, եթե վերաբերում են ամբողջ հայտարարագրին, կամ հանգեցնում են այդ կարգավիճակի համապատասխան սահմանափակման, եթե վերաբերում են միկրոօրգանիզմների միայն որոշակի տեսակների:

(3) (1) և (2) մասերում նշված ընթացակարգի մանրամասները բերված են Հրահանգում:

Հոդված 9

Արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունները

(1)(ա) Ցանկացած միջկառավարական կազմակերպություն, որին մի քանի պետություններ վստահել են տարածաշրջանային արտոնագիր տալու հարցը, և որի բոլոր մասնակից պետությունները Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային (Փարիզյան) միության անդամ են, կարող է գլխավոր տնօրենին հայտարարագիր ուղարկել այն մասին, որ նա ընդունում է 3 (1) (ա) հոդվածով սահմանված պարտավորությունները, 3 (2) հոդվածով նախատեսված պահանջներին վերաբերող պարտավորությունները և սույն պայմանագրի և Հրահանգի բոլոր գործող դրույթները, որոնք կիրառելի են արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունների համար: Եթե հայտարարագիրը ներկայացվել է մինչև սույն պայմանագիրը 16 (1) հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելը, ապա նախորդ նախադասության մեջ նշված հայտարարագիրը գործում է ուժի մեջ մտնելու նշված թվականից: Եթե հայտարարագիրը ներկայացվել է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, հայտարարագիրը ներկայացնելու դեպքում դրա գործողությունը սկսվում է այն ներկայացնելուց երեք ամիս անց, եթե հայտարարագրի մեջ ավելի ուշ ժամկետ նշված չէ: Վերջինիս դեպքում հայտարարագիրը կսկսի գործել նշված թվականից:

(բ) Վերը նշված կազմակերպությունն ունի 3(1) (բ) հոդվածով նախատեսված իրավունքը:

(2) Եթե սույն պայմանագրի կամ Հրահանգի որևէ դրույթ, որն առնչվում է արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությանը, վերանայվում կամ փոփոխվում է, արդյունաբերական սեփականության ցանկացած միջկառավարական կազմակերպություն կարող է (1) կետում նշված իր հայտարարագիրը հետ կանչել գլխավոր տնօրենին հասցեագրված ծանուցմամբ: Հետկանչումն ուժի մեջ է մտնում՝

(i) եթե ծանուցումը ստացվել է մինչև վերանայումը կամ փոփոխություններն ուժի մեջ մտնելը՝ ծանուցումն ստանալու թվականից.

(ii) եթե ծանուցումը ստացվել է (i)-ում նշված թվականից հետո՝ ծանուցման մեջ նշված թվականին, կամ եթե թվականը նշված չէ՝ ծանուցումն ստանալու թվականից երեք ամիս հետո:

(3) Ի լրումն (2) կետում նշված դեպքի, արդյունաբերական սեփականության ցանկացած միջկառավարական կազմակերպություն գլխավոր տնօրենին հասցեագրված ծանուցմամբ կարող է հետ կանչել (1)(ա) կետում նշված իր հայտարարագիրը: Այդ հետկանչումն ուժի մեջ է մտնում գլխավոր տնօրենի կողմից ծանուցումն ստանալու թվականից երկու տարի հետո: Սույն կետին համապատասխան հայտարարագիրն ուժի մեջ մտնելու թվականից հետո հինգ տարվա ընթացքում հետ կանչելու մասին ոչ մի ծանուցում չի ընդունվում:

(4) (2) կամ (3) կետում նշված հետկանչումը, որը կատարվել է արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպության կողմից, որի 7 (1) հոդվածի համաձայն հաղորդումն ավանդադրման հիմնարկին թույլ է տվել ձեռք բերել միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ, հանգեցնում է այդ կարգավիճակի դադարեցմանը՝ գլխավոր տնօրենի կողմից հետ կանչելու մասին ծանուցումն ստանալու թվականից մեկ տարի հետո:

(5) (1)(ա) կետում նշված ցանկացած հայտարարագիր, (2) կամ (3) կետում նշված հետ կանչման ցանկացած ծանուցում, 6 (1) հոդվածի երեկրորդ նախադասության համաձայն կատարված երաշխիքները և 7(1)(ա) հոդվածի համաձայն արված հայտարարագրի մեջ ներառված երաշխիքները, 8(1) հոդվածի համաձայն դրված ցանկացած պահանջ և հետ կանչելու մասին 8(2) հոդվածում նշված ծանուցումները պահանջում են հատուկ հաստատում արդյունաբերական սեփականության

միջկառավարական կազմակերպության կառավարման գերագույն մարմնի կողմից, որի անդամները վերը նշված կազմակերպության անդամ բոլոր երկրներն են, և որտեղ որոշումն ընդունվում է այդ պետությունների կառավարությունների պաշտոնական ներկայացուցիչների կողմից:

ԳԼՈՒԽ II **Վարչական դրույթներ**

Հոդված 10 **Ասամբլեան**

(1) (ա) Ասամբլեան բաղկացած է մասնակից պետություններից:

(բ) Յուրաքանչյուր մասնակից պետություն ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ և փորձագետներ:

(գ) Արդյունաբերական սեփականության յուրաքանչյուր միջկառավարական կազմակերպություն Ասամբլեայի և Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին ներկայացված է հատուկ դիտորդներով:

(դ) Ցանկացած երկիր, որը Միության անդամ չէ, սակայն Կազմակերպության կամ Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային (Փարիզյան) միության անդամ է, և արտոնագրային բնագավառում մասնագիտացած ցանկացած միջկառավարական կազմակերպություն, որը չի հանդիսանում արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն, որը նշված է 2 (v) հոդվածում, կարող է դիտորդներով ներկայանալ Ասամբլեայի նիստերին, և եթե Ասամբլեան ընդունի այդպիսի որոշում, նաև Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեի կամ աշխատանքային խմբի նիստերին:

(2)(ա) Ասամբլեան

(i) քննարկում է Միության պահպանությանը և զարգացմանը, ինչպես նաև սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր խնդիրները.

(ii) իրագործում է այնպիսի իրավունքներ և իրականացնում է այնպիսի խնդիրներ, որոնք հատուկ դրված են նրա վրա կամ հանձնարարված են նրան սույն պայմանագրով.

(iii) վերանայման կոնֆերանսների նախապատրաստման հետ կապված հրահանգներ է տալիս գլխավոր տնօրենին.

(iv) քննարկում և հաստատում է գլխավոր տնօրենի հաշվետվությունները, որոնք վերաբերում են Միությանը և Միության իրավասության մեջ մտնող հարցերով նրան տալիս է բոլոր անհրաժեշտ հրահանգները.

(v) ստեղծում է այնպիսի կոմիտեներ և աշխատանքային խմբեր, որոնք անհրաժեշտ է համարում Միության աշխատանքներին օժանդակելու համար.

(vi) հաշվի առնելով (1)(դ) կետի դրույթները, որոշում է, թե մասնակից պետություն չհամարվող որ պետությունների միջկառավարական կազմակերպություններին, որոնք 2 (v) հոդվածում նշված արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն չեն, և որ միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին է թույլատրվում դիտորդի կարգավիճակով մասնակցել Ասամբլեայի նիստերին, և թե ինչ չափով են միջազգային ավանդադրման մարմիններն ընդունվելու իր նիստերում՝ որպես դիտորդներ.

(vii) Միության հետագա նպատակներին հասնելու համար իրականացնում է ցանկացած այլ անհրաժեշտ գործողություն.

(viii) կատարում է պայմանագրից բխող ցանկացած այլ գործողություն:

(բ) Կազմակերպության կողմից ղեկավարվող այլ Միությունների համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ Ասամբլեան որոշում է կայացնում Կազմակերպության կոորդինացնող կոմիտեի կարծիքը լսելուց հետո:

(3) Մեկ ներկայացուցիչը կարող է ներկայացնել մեկ պետություն և քվեարկել միայն մեկ պետության անունից:

(4) Յուրաքանչյուր մասնակից պետություն ունի մեկ ձայն:

(5) (ա) Մասնակից պետությունների մեկ երկրորդն ապահովում է քվորումը :

(բ) Քվորումի բացակայության դեպքում Ասամբլեան կարող է որոշումներ ընդունել, սակայն Ասամբլեայի բոլոր որոշումները, բացառությամբ սեփական ընթացակարգերին վերաբերող որոշումներից, ուժի մեջ են մտնում միայն այն դեպքում, եթե կա քվորում և ձայների պահանջվող մեծամասնությունն ապահովված է նամակագրությամբ քվեարկելու միջոցով, ինչպես նախատեսված է Հրահանգով:

(6)(ա) Համաձայն 8(1)(գ), 12 (4) և 14(2) (բ) հոդվածների դրույթների, Ասամբլեան իր որոշումներն ընդունում է ձայների մեծամասնությամբ:

(բ) Ձեռնպահների ձայները հաշվի չեն առնվում:

(7) (ա) Ասամբլեան հրավիրում է հերթական նստաշրջանը յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ Գլխավոր տնօրենի հրավերով, գերադասելի է նույն ժամանակ և նույն տեղում, ինչ Կազմակերպության Գլխավոր Ասամբլեան:

(բ) Ասամբլեան հրավիրվում է արտահերթ նստաշրջանի, որը գումարվում է Գլխավոր տնօրենի նախաձեռնությամբ, կամ մասնակից պետությունների մեկ չորրորդի պահանջով:

(8) Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները:

Հոդված 11 **Միջազգային բյուրոն**

(1) Միջազգային բյուրոն՝

(i) իրականացնում է Միությանը վերաբերող վարչական խնդիրները, մասնավորապես այնպիսի խնդիրներ, որոնք նրա վրա դրված են սույն պայմանագրին և Հրահանգին համապատասխան կամ Ասամբլեայի կողմից

(ii) կատարում է վերանայման կոնֆերանսների, Ասամբլեայի, Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեների և աշխատանքային խմբերի և Միության աշխատանքներին առնչվող հարցերով գլխավոր տնօրենի կողմից գումարված ցանկացած նիստի քարտուղարի պարտականությունները:

(2) Գլխավոր տնօրենը Միության գլխավոր պաշտոնատար անձն է և ներկայացնում է Միությունը:

(3) Գլխավոր տնօրենը գումարում է Միությանը վերաբերող հարցերի քննարկման համար անհրաժեշտ բոլոր նիստերը:

(4)(ա) Գլխավոր տնօրենը և նրա նշանակմամբ աշխատակազմի որևէ անդամ առանց ձայնի իրավունքի մասնակցում են Ասամբլեայի, Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեների և աշխատանքային խմբերի բոլոր նիստերին, ինչպես նաև Միության աշխատանքներին առնչվող հարցերով գլխավոր տնօրենի կողմից գումարված ցանկացած նիստի:

(բ) Գլխավոր տնօրենը կամ նրա նշանակմամբ աշխատակազմի որևէ անդամ ի պաշտոնե Ասամբլեայի և (ա) կետում նշված կոմիտեների, աշխատանքային խմբերի և այլ նիստերի քարտուղարն է:

(5)(ա) Ասամբլեայի ցուցմունքներին համապատասխան գլխավոր տնօրենը նախապատրաստում է վերանայման կոնֆերանսներ:

(բ) Վերանայման կոնֆերանսը նախապատրաստելու հարցերով Գլխավոր տնօրենը կարող է խորհրդակցել միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

(գ) Գլխավոր տնօրենը և նրա կողմից նշանակված անձինք վերանայման կոնֆերանսների քննարկումներին մասնակցում են առանց ձայնի իրավունքի:

(դ) Գլխավոր տնօրենը կամ նրա կողմից նշանակված աշխատակազմի որևէ անդամ ի պաշտոնե բոլոր վերանայման կոնֆերանսների քարտուղարն է:

Հոդված 12 **Հրահանգ**

(1) Հրահանգով նախատեսվում են կանոններ, որոնք վերաբերում են՝

(i) խնդիրների, որոնց առնչությամբ սույն պայմանագիրը հատուկ հղումներ է անում Հրահանգին, կամ հատուկ նշում է, որ դրանք սահմանված են կամ կսահմանվեն.

(ii) ցանկացած վարչական պահանջի, խնդրի կամ գործընթացի.

(iii) ցանկացած մանրամասնության (մանրուքի), որն օգտակար է սույն պայմանագրի կատարման համար:

(2) Հրահանգը, որն ընդունվել է սույն պայմանագրի հետ միասին, սույն պայմանագրի հավելվածն է:

(3) Ասամբլեան իրավունք ունի փոփոխություններ կատարել Հրահանգի մեջ:

(4) (ա) Հաշվի առնելով (բ) կետի դրույթները, Կանոնակարգի ցանկացած փոփոխություն ընդունելու համար պահանջվում է ձայների երկու երրորդ մեծամասնություն:

(բ) Միջազգային ավանդադրման մարմնի կողմից ավանդադրված միկրոօրգանիզմների նմուշների տրամադրմանը վերաբերող որևէ փոփոխություն ընդունելու համար պահանջվում է, որ ոչ մի մասնակից պետություն դեմ չքվեարկի առաջարկված փոփոխությանը:

(5). Սույն պայմանագրի և Հրահանգի դրույթների միջև հակասության առկայության դեպքում գործում են սույն պայմանագրի դրույթները:

ԳԼՈՒԽ III

Վերանայում և փոփոխություններ

Հոդված 13

Համաձայնագրի վերանայումը

(1) Սույն համաձայնագիրը ժամանակ առ ժամանակ կարող է վերանայվել մասնակից պետության հատուկ կոնֆերանսների կողմից:

(2) Վերանայման ցանկացած կոնֆերանս գումարելու մասին որոշում ընդունվում է Ասամբլեայի կողմից:

(3) 10-րդ և 11-րդ հոդվածների փոփոխությունները կարող են ընդունվել կամ վերանայման կոնֆերանսում, կամ 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 14

(1) (ա) Սույն հոդվածին համապատասխան 10-րդ և 11-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները կարող են արվել ցանկացած մասնակից պետության կամ գլխավոր տնօրենի կողմից:

(բ) Գլխավոր տնօրենը այդ առաջարկությունները մասնակից պետություններին ծանուցում է Ասամբլեայի կողմից քննարկման դրվելուց առնվազն վեց ամիս առաջ:

(2) (ա) (1) կետում նշված հոդվածների փոփոխությունները ընդունվում են Ասամբլեայի կողմից:

(բ) 10-րդ հոդվածի ցանկացած փոփոխություն ընդունելու համար պահանջվում է ձայների չորս հինգերորդ մեծամասնություն, 11-րդ հոդվածի ցանկացած փոփոխություն ընդունելու համար պահանջվում է ձայների երեք չորրորդ մեծամասնություն:

(3)(ա) (1) կետում նշված հոդվածների ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն բանից հետո մեկ ամիս անց, երբ դրա ընդունման մասին յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգին համապատասխան գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են այն անդամ պետությունների երեք քառորդից, որոնք փոփոխությունն ընդունելու պահին Ասամբլեայի անդամներ էին:

(բ) Նշված հոդվածներում այդ ձևով ընդունված ցանկացած փոփոխություն պարտադիր է այն պետությունների համար, որոնք փոփոխություններն Ասամբլեայի կողմից ընդունվելու պահին մասնակից պետություններ են, սակայն ցանկացած փոփոխություն, որը մասնակից պետությունների համար ֆինանսական պարտավորություններ է առաջացնում, կամ ավելացնում է այդ պարտավորությունները, պարտադիր է միայն այն պետությունների համար, որոնք ծանուցել են իրենց կողմից այդպիսի փոփոխություններն ընդունելու մասին:

(գ) (ա) կետի դրույթներին համապատասխան ընդունված և ուժի մեջ մտած ցանկացած փոփոխություն պարտադիր է բոլոր այն պետությունների համար, որոնք մասնակից պետություն են դառնում այդ փոփոխություններն Սասմբլեայի կողմից ուժի մեջ մտելուց հետո:

ԳԼՈՒԽ IV **Վերջնական դրույթներ**

Հոդված 15 **Պայմանագրին մասնակից կողմ դառնալը**

(I) Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային (Փարիզյան) միության մասնակից ցանկացած պետություն կարող է դառնալ սույն Պայմանագրին մասնակից՝

(i) Համաձայնագիրն ստորագրելու, այնուհետև վավերագիրն ի պահ հանձնելու, կամ

(ii) Վավերագիրը ի պահ հանձնելու միջոցով:

(2) Վավերագիրը կամ միացման ակտերն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

Հոդված 16 **Պայմանագիրն ուժի մեջ մտնելը**

(i) Առաջին հինգ երկրների կողմից վավերագրերը կամ միացման ակտերն ի պահ հանձնելու դեպքում սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրը կամ միացման ակտն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

(2) Ցանկացած երկրի նկատմամբ պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն թվականից երեք ամիս հետո, երբ ծանուցվել է դրա վավերացման կամ միացման մասին, եթե վավերագրում կամ միացման ակտում նշված չի եղել ավելի ուշ թվական: Վերջինի դեպքում սույն պայմանագիրն այդ երկրի նկատմամբ ուժի մեջ է մտնում նշված թվականին:

Հոդված 17 **Պայմանագիրը չեղյալ հայտարարելը**

(1) Ցանկացած անդամ պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն պայմանագիրը՝ Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

(2) Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից ծանուցում ստանալու թվականից երկու տարի հետո:

(3) (1) հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարելու իրավունքը որևէ մասնակից պետության կողմից չի կարող օգտագործվել, մինչև այն թվականից հինգ տարին լրանալը, երբ նա դարձել է սույն պայմանագրի կողմ:

(4) Սույն պայմանագիրը չեղյալ հայտարարելը որևէ անդամ պետության կողմից, որը 7 (1) (ա) հոդվածով հայտարարագիր է ուղարկել որևէ ավանդադրման մարմնի վերաբերյալ, որը դրա արդյունքում միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ է ձեռք բերել, դադարեցնում է այդ կարգավիճակը՝ Գլխավոր տնօրենի կողմից (1) կետում նշված ծանուցումը ստանալու թվականից մեկ տարվա ընթացքում:

Հոդված 18 **Պայմանագրի ստորագրումը և լեզուները**

(1) (ա) Սույն պայմանագիրն ստորագրվում է մեկ օրինակ՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարապես վավերական են:

(բ) Սույն պայմանագրի պաշտոնական տեքստերը մշակվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, և սույն պայմանագրի ստորագրման թվականից երկու ամսվա ընթացքում՝ այլ լեզուներով, որոնցով ստորագրվել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող կոնվենցիան:

(գ) Սույն պայմանագրի պաշտոնական տեքստերը մշակվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո՝ արաբերեն, գերմաներեն, իտալերեն, ճապոներեն և պորտուգալերեն, ինչպես նաև բոլոր այն լեզուներով, որ կարող է որոշել Ասամբլեան:

(2) Սույն պայմանագիրն ստորագրման համար բաց է Բուդապեշտում մինչև 1977 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 19

Պայմանագիրն ի պահ հանձնելը, պատճենների առաքումը, պայմանագրի գրանցումը

(1) Սույն պայմանագրի բնօրինակն ի պահ է հանձնվում Գլխավոր տնօրենին այն բանից հետո, երբ այն այլևս բաց չէ ստորագրման համար:

(2) Գլխավոր տնօրենը սույն պայմանագրի և Հրահանգի իր կողմից վավերացված տեքստերի երկու պատճենները ուղարկում է 15 (1) հոդվածում նշված բոլոր պետությունների կառավարություններին, միջկառավարական կազմակերպություններին, որոնք կարող են 9(1)(ա) հոդվածին համապատասխան հայտարարություն ներկայացնել պայմանագրի օրինակ ունենալու համար, և ըստ ցանկացած այլ պետության կառավարության պահանջի:

(3) Գլխավոր տնօրենը սույն Պայմանագիրը գրանցում է Միավորված Ազգերի Կազմակերպության քարտուղարությունում:

(4) Գլխավոր տնօրենը սույն պայմանագրի և Հրահանգի իր կողմից վավերացված ցանկացած փոփոխության երկու պատճենները ուղարկում է մասնակից պետություններին, արդյունաբերական սեփականության բոլոր միջկառավարական կազմակերպություններին և ըստ պահանջի՝ ցանկացած այլ պետության կառավարություն կամ այլ միջկառավարական կազմակերպություն, որը կարող է 9(1) հոդվածով հայտարարագիր ներկայացնել:

Հոդված 20

Ծանուցումներ

Գլխավոր տնօրենը մասնակից պետություններին, միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպություններին և Միության ոչ անդամ այն երկրներին, որոնք անդամ են Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային (Փարիզյան) միությանը, ծանուցում է

(i) 18-րդ հոդվածին համապատասխան ստորագրումների մասին.

(ii) 15 (2) հոդվածով վավերացման կամ անդամակցության ակտն ի պահ հանձնելու մասին.

(iii) 9(1) (ա) հոդվածին համապատասխան կատարված հայտարարագրի և 9(2) կամ (3) հոդվածով արված հետկանչման ծանուցումների մասին.

(iv) 16 (1) հոդվածին համապատասխան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու թվականի մասին.

(v) 7-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան կատարված հաղորդումների, ինչպես նաև 8-րդ հոդվածին համապատասխան ընդունված որոշումների մասին.

(vi) 14(3) հոդվածով սույն պայմանագրում կատարված փոփոխությունների ընդունման մասին.

(vii) Հրահանգի ցանկացած փոփոխության մասին.

(viii) պայմանագրի կամ կանոնակարգերի փոփոխություններն ուժի մեջ մտնելու թվականի մասին.

(ix) 17-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին: